ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋ

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտությունը՝ Նախադպրոցական կրթություն

Թեման՝

Ծիսական, մանկական ազգային երգերը, խաղերգերը, խաղերը, խաղիկները՝ որպես գեղագիտական դաստիարակության և ազգային մշակույթի փոխանցման միջոց

Ուսանող՝ Պայծառ Գրիգորյան

Ղեկավար՝ Մարինե Մկրտչյան

ԵՐԵՎԱՆ, 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Նախադպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ է ունի գեղագիտական դաստիարակությունը, որը նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը, բացահայտում է նրա ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը:

Ինչպես հայտնի է, նախադպրոցականների գեղագիտական դաստիարակությունը կոչված է ձևավորելու երեխաների

- **Գեղագիտական գիտակցությունը** (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկի պահանջմունքի և գեղագիտական ճաշակի դաստիարակություն),
- ինչպես նաև **գեղագիտական գեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները** (երաժշտություն, պար, նկաչություն, ապլիկացիա, ծեփակերտում և այլն):

Այս կարողությունները խիստ կարևոր են համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման համար:

Մյուս կողմից ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության համար՝ տալով գիտելիք (տեղեկություններ ազգային սովորությունների մասին), ձևավորելով երաժշտական կարողություններ, ճաշակ (ծիսական, ազգային երգ ու պար), ինչպես նաև գեղարվեստական հմտություններ (ծեսերին նախապատրաստվելիս ծիսական ատրիբուտների պատրաստում, նկար, ծեփակերտում և այլն):

Ասվածը ցույց է տալիս, որ դիպլոմային աշխատանքի թեման արդիական է և կարևոր։

Աշխատանքի **նպատակն** է՝ ուսումնասիրել նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալ ազգային, ծիսական, մանկական խաղերի, խաղիկների, թռնոցիների, ասիկների դերը նախադպրոցական տարիքի երեխայի գեղագիտական դաստիարակության, ազգային մշակույթի փոխանցման գործում:

Դիպլոմային աշխատանքն ունի.

- ներածություն,
- 2 գլուխ,
- եզրակացություն ,
- գրականության ցանկ
- հավելվածներ՝ կատարված գործնական աշխատանքի տեսանյութերով։

ԳԼՈՒԽ 1.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ - ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության նպատակն ու խնդիրները

Նախադպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ է ունի **գեղագիտական դաստիարակությունը,** որը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված ստեղծագործելու ընդունակ անձնավորության ձևավորմանը: Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշում, գեղեցիկն ընկալելու, զգալու և գնահատելու ընդունակություն։ Գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է երեխայի հուզա-զգացմունքային ոլորտի զարգացումը, որն

առավել ակտիվ է ընթանում վաղ և նախադպրոցական տարիքում: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում է երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Նախադպրոցական, հատկապես ավագ նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության **հիմնական նպատակը** երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները կարող ենք բաժանել երկու խմբի:

Առաջին խմբի խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը: Դրանք են.

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը.
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակության ձևավորումը.
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը.
- գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը.
- գեղագիտական ճաշակի դաստիարակությունը:

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտա - գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը: Այս տարիքում այդպիսի խնդիրներ կարող են լինել.

- երաժշտական ընդունակությունների զարգացումը, երաժշտա-ռիթմիկ կարողությունների ձևավորումը,

- պարարվեստի տարրերի ձևավորումը,
- գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորումը,
- նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- ապլիկացիայի ուսուցումը.
- կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորումը,
- արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուր գաղափարների փոխանցումը և այլն։

1.2. Գեղագիտական դաստիարակության բովանդակությունը

Գեղագիտական դաստիարակության բովանդակությունը ավագ նախադպրոցական տարիքում հիմնականում կառուցվում է երկրորդ խմբի խնդիրների հիման վրա, մշակվում են ծրագրեր և տեխնոլոգիաներ՝ ուղղված նախադպրոցականի գեղագիտական տարբեր կարողությունների ձևավորմանը:

Գեղագիտական ճաշակով ստեղծված միջավայր

Միջավայրը երեխայի դաստիարակության հիմնական պայմաններից մեկն է, իսկ ճաշակով ձևավորված միջավայրը նաև գեղագիտական դաստիարակության միջոց, երբ երեխան մշտապես հաղորդակցվում է արտաքին միջավայրի ու կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:

Հայրենի բնության գեղագիտական ազդեցությունը

Գեղագիտական դաստիարակությանը նպաստող ամենալավ միջավայրը և կարևորագույն պայմաններից մեկը հայրենի բնությունն է, դրա երեխայի շարունակական շփման ապահովումը: Հայրենի բնությունն իր ազգամշակութային բազմադարյա շերտերով, քարակերտ և ձեռակերտ կոթողներով, ազգի պատմությամբ, լեզվով և կենցաղով՝ ընդհանրական հենք է գեղագիտական դաստիարակության համար:

Արվեստի ներգործությունը

Արվեստի ներգործությունը գեղագիտական դաստիարակության կարևոր պայմաններից է: Արվեստի ժանրերից հարկ է առանձնահատուկ անդրադառնալ գեղարվեստական գրականությանը, որի դերն ու նշանակությունն անփոխարինելի է նախադպրոցականի գեղագիտական գիտակցության զարգացման գործում:

Ժողովրդական բանահյուսություն

Հատկապես հզոր է ժողովրդական բանահյուսության (հեքիաթների, շուտասելուկների, սուտասելուկների, հանելուկների, ասացվածքների, խաղիկների, ծեսերի) ներգործությունը: Հեքիաթների երևակայական կերպարները ներառում են բարու և չարի հավաքական նմուշներ, բարոյականության և գեղեցկության տարրեր, որոնք ընդհանրացված ձևով նպաստում են երեխայի կողմից երկրային կյանքի իմաստավորմանը, իրական կյանքում բարու և չարի տարանջատմանը:

Ինքնուրույն գեղարվեստական գործունեությունը

Նախադպրոցականի գեղագիտական զարգացմանը լավագույնս նպաստում է ինքնուրույն գեղարվեստական գործունեությունը:

Գեղարվեստական գործունեությամբ ինքնուրույն զբաղվելու կարողությունը զարգանում է աստիճանաբար՝ անցնելով ձևավորման երեք փուլ.

- վերարտադրող (ռեպրոդուկտիվ) գործունեության ձևավորում,

- ստեղծագործական բնույթի, մեծահասակների հետ համատեղ գործունեության ձևավորում,
- ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորում, որն աստիճանաբար վերածվում է ստեղծագործության:

Գեղագիտական դաստիարակության **միջոցները** արդյունավետ են ինչպես ինքնուրույն կիրառման, այնպես էլ համատեղ օգտագործման պայմաններում:

Գեղագիտական դաստիարակության **կազմակերպման ձևերը** բազմաթիվ են և բազմաբնույթ:

Նախակրթարանում իրականացվող մանկավարժական գործընթացում ծրագրավորված կազմակերպվում են բազմատեսակ պարապմունքներ՝

- խաղ - պարապմունքներ,
- երաժշտական խաղ - պարապմունքներ,
- պարապմունք - վիկտորինաներ,
- էքսկուրսիաներ,
- տոնահանդեսներ,
- ծեսեր և այլն:

1.3. Գեղագիտական դաստիարակությունը խթանող միջավայր

Նախակրթարանում սաների գեղագիտական դաստիարակությունն ապահովելու համար կարևոր է ստեղծել այնպիսի ֆիզիկական միջավայր, որտեղ կլինեն գործունեություն ծավալելու բոլոր հնարավոր միջոցները: Այդ նպատակին են ծառայում խմբում ստեղծվող աշխատանքային կենտրոնները:

<u>Արվեստի կենտրոն</u>

Արվեստի աշխատանքային կենտրոնը երեխաներին խրախուսում է հետազոտելու և զարգացնելու իրենց ստեղծագործական ունակությունները,

ծանոթանալու նոր նյութերի, դրսևորելու իրենց զգացմունքները: Այս տարածքում օգտագործվող նյութեր կարող են լինել ներկերը, թուղթը, մկրատը, գունավոր մատիտները, մոմամատիտները, ծեփամածիկը, կավիճը, գործվածքը կամ նյութերի կտորտանքը՝ սոսնձելու և փակցնելու համար: Այստեղ կարող են ավելացվել նաև բնական նյութեր, օրինակ՝ փայտ, տերևներ, ավազ, եղևնու կոներ, կաղիններ և այլն:

Այս կենտրոնում զարգանում է ստեղծագործական ինքնուրույնությունը, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցումը, սեփական արժանապատվության գիտակցումը, մանր և մեծ շարժողական հմտությունները, մտավոր ունակությունները: Արվեստի կենտրոնը նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը և օգնում է երեխաների մեջ սեր արթնացնել արվեստի նկատմամբ:

<u>Երաժշտության կենտրոն</u>

Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաների կյանքում խոսքը, շարժումը, խաղը և երգը միասնական են: Համարվում է, որ երեխայի բնական խոսքն ու շարժումները պետք է դառնան երաժշտական փորձառության խթաններ, և որ երեխաները պետք է երաժշտության ստեղծման գործում մասնակիցներ դառնան:

1.4. Երաժշտությունը նախակրթարանում

Երաժշտության կենտրոնի աշխատանքը նպաստում է երեխաների **համակողմանի զարգացմանը:** Նրա առավել ակնհայտ նշանակությունը կապված է հուզական զարգացման հետ: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո, փաղաքշանքի, ուրախության, խիզախության, տխրության երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները:

Երաժշտությունը նաև զորեղ միջոց է սոցիալական զարգացումը խթանելու համար: Երեխաների խումբը կարող է համատեղ երգել կամ նվագակցել՝ ոչ միայն մեծ հաճույք ստանալով այդ խմբային գործունեությունից, այլև կարևորելով գործունեության այդ ձևը: Հաճախ այն երեխաները, ովքեր դժկամությամբ են մասնակցում կամ ինքնարտահայտվում խմբային պարապմունքների ժամանակ, ավելի մեծ պատրաստակամությամբ են միանում երգին կամ պարին: Մանկական երգերից շատերը նախատեսում են զուգորդող շարժումների կատարում: Այս երգերը, որոնց ընթացքում երեխաները միաժամանակ կատարում են միևնույն շարժումները, հատկապես արդյունավետ են այլ հանգամանքներում պասիվություն դրսևորող երեխաներին աշխուժացնելու և ներգրավելու իմաստով:

Երաժշտությունը խթանում է նաև լեզվական ունակությունների զարգացումը: Մարդկային խոսքին հատուկ է թե՛ ռիթմիկ և թե՛ մեղեդային կառուցվածքը: Սովորաբար երեխաները խաղում են բառերի հետ ռիթմի և մեղեդու տարրերի կիրառմամբ: Այս բնական խաղը մանկավարժի կողմից կարող է օգտագործվել երեխաների ուշադրությունը լեզվի հնչողության վրա դարձնելու համար: Օրինակ՝ նա կարող է օգնել երեխաներին սովորել խմբի մյուս երեխաների անունները՝ ցուցադրելով յուրաքանչյուր երեխայի անվան ռիթմը ծափերի կամ դափերին հարվածելու միջոցով:

Երաժշտությունը կարող է նաև օգնել երեխաներին ընդլայնել իրենց լեզվական կարողությունները: Մեղեդին հղկում է հիշողությունը, հետևաբար երեխան կարող է հիշել երգի այն բառերը, որոնք իր բնական խոսքից մի փոքր բարդ են, այնուհետև օգտագործել դրանք նաև իր խոսքում: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Մեծ է այնպիսի երգերի թիվը, որոնք պարունակում են թվարկումներ ու երևույթների անվանումներ, որոնց միջոցով երեխաների բառապաշարը կհամալրվի նոր բառերով: Երեխաները կարող են ծանոթ մեղեդիների օգտագործմամբ սեփական երգեր հորինել՝ պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով անհատական զգացողությունները:

Երաժշտության միջոցով զարգանում են երեխաների շարժողական հմտությունները: Մատնախաղերը երեխային հնարավորություն են տալիս շարժել մատներից յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ ի պատասխան որոշակի երգի, հետևաբար հղկում են աչքերի ու ձեռքերի կոորդինացիան: Պարզունակ ինքնաշեն գործիքները զարգացնում են նուրբ շարժողական հմտությունները, ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ նվագելու ընթացքում: Ինքնաբուխ պարերն ու երաժշտությանը համահունչ շարժումները ևս խթանում են շարժողական կոորդինացիան: Թեև երեխաների հորինած պարային շարժումները մեծապես նպաստում են նրանց զարգացմանը, տեղին է նաև ժողովրդական պարերի մի քանի հասարակ շարժումներ սովորեցնել նրանց խմբային ներկայացումների համար:
Խմբասենյակում կարելի է ունենալ դասական և ազգային մանկական երաժշտական ձայնագրությունների հավաքածու, ինչպես նաև բնության երևույթների և կենդանական աշխարհի ձայների ձայնագրություններ (ջրի, քամու աղմուկ, թռչունների ձայն և այլն):

1.4. Երաժշտությունը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում նախակրթարանում

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում նախակրթարանի ծրագիր կազմել է երաժշտագետ, կոմիտասագետ, մանկավարժ Արթուր Շահնազարյանը, որն էլ իր հերթին մանրակրկիտ ուսումնասիրել է մեր ազգային դպրոցի երաժշտության ծրագիրը, մասնավորապես՝ Կոմիտասի մշակած, և ներկայացրել գործնականում կիրառելի, նմանը չունեցող մեծ արժեք ներկայացնող ծրագիր, որը հենված է ազգային դպրոցի լավագույն փորձի, նյութերի վրա: Ծրագրով կազմել է համապատասխան ազգային երգերից կազմված երգարան (այստեղ տեղ են գտել նաև կոմպոզիտորական գործեր, որոնք իրենց մեղեդիական և տեքստային կառույցով շատ մոտ են ազգայինին): Այդ ծրագիրը ուսումնասիրվել, փորձարկվել է կրթահամալիրի նախակրթարաններում: Արդյունքն ակնհայտ գերազանց է, սաները, երաժշտական ազգային նյութն արագ յուրացնելուց բացի, կարողանում են

խաղալ, զարգացնել, հետագայում հեշտությամբ ներառվել ազգային երգերի, պարերի, ծեսերի կատարման, իրականացման գործընթացին՝ դառնալով ազգային մշակույթի կրող – տարածողներ:

- Արթուր Շահնազարյան՝ «Երաժշտությունը նախակրթարանում»
- «Երաժշտությունը նախակրթարանում» - մեթոդական մշակում (Մարինե Մկրտչյան)

Մեր աշխատանքի **ուսումնասիրության օբյեկտը** նախադպրոցական տարիքի երեխան է, իսկ **ուսումնասիրության առարկան՝** նախադպրոցականի երաժշտական գործունեությունը:

ԳԼՈՒԽ 2.

2.1. Երաժշտության գործունեության ձևերը նախակրթարանում.

- Երգեցողություն
- Ունկնդրում
- Պար
- Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում
- Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժություններ, երաժշտական և այլ խաղեր
- Նվագակցություն «բնական», հարվածային և շրխկան նվագարաններով

Երգեցողություն. Խնդիրները՝

- ազգային, մանկական (մանուկների կողմից ստեղծված ազգային խաղերգեր) նյութի յուրացում,
- ինտոնացիոն մաքուր երգեցողության մշակում,
- երաժշտական ունակությունների զարգացում,
- երգի կատարողական գրագիտության և կուլտուրայի մշակում (5-6 տարեկաններ),
- երգի կերպարային զգացողություն,

- ճաշակի ձևավորում:

Ունկնդրվող նյութերը ենթադրում են.

- երաժշտական, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- ազգային, հոգևոր և համաշխարհային դասական լավագույն ստեղծագործությունների իմացում լսողության միջոցով:

Ունկնդրվող նյութերն ընտրված են ազգային, հոգևոր և դասական երգերից, պարեղանակներից, հայ և այլազգի կոմպոզիտորների լավագույն դասական ստեղծագործություններից:

Պար

Պարը իր շարժումային համակարգով մի լեզու է, որն արտահայտում է մարդու հոգեվիճակը, հույզերն ու ապրումները՝ ուղեկցվելով երգով, երաժշտությամբ, հարվածային նվագարանների կամ ծափերի ռիթմիկ պատկերով:
Պարի գործունեության խնդիրն է՝ ավանդական պարին շարժումային համակարգի, զգացողության փոխանցում երեխային: Շատ կարևոր է, որ ուսուցանվի մաքուր ավանդական պար: Ավանդական պարերը կարող են պարել բոլորը, դրանք բնական շարժումներից են կազմված, մատչելի են, հասկանալի: Երգացանկում տեղ գտած պարերգերը կարող են կատարվել պարի ուղեկցությամբ: Նախակրթարանում 5-6 տարեկանները կարող են ազգային պարային որոշակի շարժումներ կատարել, ավելի փոքրերի համար՝ դժվար է:

Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժություններ

Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժությունների նպատակը սաների երաժշտական ունակությունների, ռիթմի զգացողության զարգացումն է, հնչյունի տևողության ճիշտ կատարումը:

Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում

- Ազգային ծեսեր, տոներ. նկարագրություն

Ծեսը նախակրթարանում

«Մարդկությունը հարատևում է այն ժամանակ, երբ մի սերունդը կարողանում է իր ստեղծածը, իր փորձը անկորուստ փոխանցել հաջորդ սերնդին։
Ծեսը ի սկզբանե կարգավորել է տվյալ խմբի՝ ազգի, ժողովրդի ներքին, ազգային կապերը, օգնել է մարդկանց յուրացնել ազգային, խմբային նորմերն ու արժեքները և համախմբվել: Ծեսերի շնորհիվ են պահպանվել, սերնդեսերունդ փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել ժողովրդին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել ժողովրդի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա։»
Մ. Մկրտչյան՝ «Հանրակրթական ծես. ստեղծում, փոխանցում»

Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ: Խնդրի իրագործման համար սաները.

- սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ,
- նկարում են

ա. ծիսական հերոսներին,

բ. ծիսական պարագաներ,

- պատրաստում են ծիսական պարագաներ դաստիարակի, ծնողի օգնությամբ,
- խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր,
- բեմականացնում են երգեր,
- կատարում են բնագիտական փորձեր,

- գնում են ուսումնական ճամփորդության,
- հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք,
- վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Սանը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով՝ յուրացնում է ծեսը, որն ազգային մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկն է:

Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- նյութի յուրացում
- կարողությունների դրսևորում,
- խոսքի զարգացում,
- տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),
- գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում,
- ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:

Այս աշխատանքները նպաստում են.

- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը,
- ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,
- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Այս գործունեության արդյունքում

Սանը կիմանա

- ազգային ծեսը,
- ազգային սովորույթները,
- հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ծիսական կերպարները,
- ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,
- ծիսական կերակրատեսակները,
- ծիսական պարագաները:

Սանը կկարողանա

- երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- կատարել ազգային պարին բնորոշ շարժումներ,
- ստեղծագործել, զարգացնել ծիսական գործողությունները՝ մանկանը հատուկ պարզամտությամբ,
- պատրաստել ծիսական պարագաներ,
- խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:

Սանը կլինի

- ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սաները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Գործունեության ձևերի ինտեգրումը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս

Մայրենի - գիտեն ծեսը, ծիսական ավանդություններ և զրույցներ, ասույթներ, առած – ասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում

են խաղարկել ծիսական գործողություններ, կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի, Հարության, Համբարձման ծեսերին):

Մարմնակրթություն - գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:

Բնագիտություն - կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ՝ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան, գիտելիքներ:

Ձեռարվեստ, կերպարվեստ - կարողանում են պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերպար – տիկնիկներ կամ ծիսական կերպարի հանդերձանք, կատարել նյութի ընտրություն:

Խոհանոց - ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ պատրաստելիս դաստիարակի, ծնողի կողքին լինել մասնակից:

2.2. Գործնական աշխատանք

Ծիսական, մանկական ազգային երգեր, խաղերգեր, խաղեր, խաղիկներ - տեսաֆիլմեր

Խաղերգեր

- Բարեկենդանի ծիսական խաղերգ՝ «Գնացեք, տեսեք»

Երգը սկզբից մինչև վերջ խաղ է, որի ընթացքում զարգանում է սաների ուշադրությունը, ռիթմի զգացողությունը, ստեղծականությունը, հնարամտությունը, իրար հետ հաղորդակցվելու կարողությունը:

- Կատակերգ՝ «Կիկլիկո» - 1

Սաները երաժշտության դաստիարակի հետ երգում և ձեռքերի, մարմնի շարժումներով բեմականացնում են երգի բովանդակությունը: Զարգացնելով երգ-խաղը, որոշում են մատնախաղով շեղել հավիկներին՝ հնարավորություն տալով փախցնել աքլորին: Բայց, քանի որ համաձայն չեն փաղցնողների հետ, որոշում են այլ ընթացք տալ երգին: Արդյունքում աքլորը հետ է գալիս, որին ուրախ, զվարթ դիմավորում են հավիկները (երևակայության, ստեղծականության զարգացում, միջանձնային հարաբերություններ (սոցիալական ոլորտ):

- Կատակերգ՝ «Կիկլիկո» - 2

Երկրորդ տարբերակում, բացի աքլորին հետ բերելուց, որոշեցին՝ թող աքլորն ու նրան փախցնող հնդկահավը մենամարտեն: Արդյունքում հաղթեց աքլորը, որի կողմն անցան հավիկները: Եվ, որպեսզիը վերջաբան դրական լուծում ստանար, որպես «տղամարդ», հաշտվեցին ու իրար ձեռք սեղմեցին:

Արդյունքում սաները, ազգային կատակերգը սովորելուց բացի, այն բեմադրեցին, որի մեջ օգտագործեցին ավանդական, մանկական խաղեր՝ մատնախաղ, ուժախաղ:

- Էկեք ծեծենք սոխ ու սխտոր

Պահքի ծիսական խաղերգ, որը նախակրթարանում հիանալի աշխատում է՝ երգ, բեմականացում, խաղ, ստեղծականություն (միջանձնյա հարաբերություններ)

Մանկական ծափխաղեր՝

- «Ծափիկ, ծափիկ, ծափլատիկ», «Ծափիկ, ծափիկ, ծափ նաներով»

Մանկական հաշվերգ՝

- «Տիտոխիկ» (Տիտոխիկ - բառեր)

Ծիսական նյութեր

Ամանոր

- Ամանորյա ընկուզախաղեր - 1
- Ամանորյա ընկուզախաղեր - 2
- Ամանորյա ընկուզախաղեր - 3

Բարեկենդան

- Բարեկենդանի ծիսական խաղերգ՝ «Գնացեք, տեսեք»

Երգը սկզբից մինչև վերջ խաղ է, որի ընթացքում զարգանում է սաների ուշադրությունը, ռիթմի զգացողությունը, ստեղծականությունը, հնարամտությունը, իրար հետ հաղորդակցվելու կարողությունը:

- Բարեկենդանի ազգային, ավանդական, մանկական խաղեր

Խաղերի մեջ կան մանկական ճվիկներ, որոնք կարող են խաղալ ինչպես զույգերով, այնպես էլ՝ միասին: Սաները նույն հաջողությամբ խաղում են երկու տարբերակով՝ լուծելով ներանձնային և միջանձնային հարաբերությունները:

- Բարեկենդանի ուժախաղեր - 1
- Բարեկենդանի ուժախաղեր - 2

Ծառզարդար

Ծառզարդար. ծիսական տոնակատարություն

Իրագործվել է ծիսական, ազգային, մանկական երգերով, ծիսական գործողություններով: Երգերը կատարվում են կենդանի, բնական խաղով, մասնակի բեմականացմամբ, ռիթմիկ ծափերով, ճոճքով, դերակատարմամբ: Առկա է երեխայի ինքնուրույն աշխատանքը, յուրաքանչյուրը խաղում է իր

խաղը՝ ընդհանուրի մեջ լուծելով մի շարք խնդիրներ, միևնույն ժամանակ ծեսի միջոցով յուրացնելով ազգային մշակույթը:

Ավագ շաբաթ. երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի

- Զրաղացպանի օր՝ «Զրաղացս մանի, մանի»
- Խնոցին հարելու օր՝ «Խնոցի, հարոցի»
- «Չիք, չիք», «Աղամ, աղամ» ծիսական խաղեր

Զատկական ձվախաղեր

- Զուփախցնոցի
- Խաղ Ակլատիզի փետուրներով
- Զուպտտոցի

Զարգացնում է մանր մոտորիկան, ուշադրությունը, կողմնորոշվելու կարողությունը, ճարպկությունը:

Համբարձում

- Համբարձման ծեսի նախապատրաստական աշխատանք նախակրթարանի խմբերում
- «Տիկնի պսակ» երաժշտաթատերական ներկայացում

Ազգային ծեսի փոխանցում՝ մանկական «Տիկնի պսակ»-ի տարբերակով, որտեղ, բացի որոշ ծիսական գործողություններից, հնչում են ծիսական երգեր (ունկնդրում), գովք, ազատ գործողություններ:

Առավոտյան ընդհանուր պարապմունք

Այսպիսի պարապմունքներում հիմնականում ներառվում են խաղերգ, պարերգ, ունկնդրում (ուղեկցվում են «բնական նվագարաններով» կատարվող ռիթմիկ պատկերներով), ռիթմիկ վարժություն:

Օգտագործված հոդվածներ, գրականություն.

Թեմային առնչվող մանկավարժական գրականություն.

- 5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց
- С. А. Козлова, «Дошкольная педагогика»
- Учебник Дошкольная педагогика
- Ա. Շահնազարյան, Երաժշտությունը նախակրթարանում
- Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
- Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
- Նախադպրոցական մանկավարժություն. ձեռնարկ
- Նախադպրոցական մանկավարժություն-Նաիրա Գրիգորյան
- Նախակրթարանում երաժշտության ծրագրի մեթոդական մշակում
- Նախադպրոցական մանկավարժություն. ձեռնարկ

2. **Ծեսերին, խաղերին, խաղիկներին առնչվող գրականություն, հոդվածներ**

- Ազգային ծեսեր, տոներ. նկարագրություն
- Հ. Գրիգորյան, «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր»
- Արամ Ղանալանյան, «Հայ շինականի աշխատանքի երգերը»
- Մանկական խաղեր, ճվիկներ, ասիկներ
- Ծիսական, ազգային մանկական խաղեր
- Խաղեր, խաղերգեր, հաշվերգեր
- ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ I
- ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ II
- ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ III
- Հայկական ավանդական խաղերի շտեմարան
- Հրանուշ Խառատյան՝ «Հայ ազգային տոները»
- Ռ. Հարոյան՝ «Զատիկ»
- Սամվել Մկրտչյան՝ «Ծեսեր_ տոներ»

- Խաղը, շարժումը, հարվածային, շրխկան նվագարանները՝ նախակրթարանում.
- Խաղը ծիսական միջավայրում
- Սուրբ Ծննդյան ավետիսներ, ամանորյա խաղեր
- Ծեսը՝ ինքնագիտակցության միջոց
- Ազգային ծեսերին, խաղերին՝ նոր կյանք